




# Veyon

Veyon համակարգը անվճար և բաց ծրագրային կոդով համակարգչային ծրագիր է՝ նախատեսված համակարգչային լսարանների մոնիթորինգի և կառավարման համար:



Ծրագիրը դասախոսին հնարավորություն է տալիս լիարժեք վերահսկել համակարգչային լսարանը:

Ծրագրի ինտերֆեյսը օգտագործման տեսակետից շատ պարզ է և հասկանալի:

Ծրագրի հնարավորությունները՝

1. Դասախոսի էկրանի ցուցադրում ինչպես առանձին մասնակցի, այնպես էլ ամբողջ լսարանի համակարգիչների համար
2. Լսարանի բոլոր համակարգիչների մոնիթորինգ և հեռակառավարում
3. Լսարանի ցանկացած համակարգիչ արգելափակելու հնարավորություն

4. Տեքստային հաղորդագրությունների ուղարկում ուսանողների համակարգիչներին
5. Ցանկացած web կայքի գործարկում դասախոսի կողմից բոլոր համակարգիչների վրա մեկ գործողությամբ:
6. Լսարանի համակարգիչների հեռավար միացում, անջատում և վերագործարկում
7. Լսարանի համակարգիչների Էկրանների դիտում, առանց ղեկավարման

Veyon-ի շնորհիվ դասախոսը տեսնում է ուսանողների Էկրանների բովանդակությունը, և եթե ուսանողներից մեկը օգնության կարիք ունի, կարող է մուտք գործել նրա համակարգիչ: Ուսանողը տեսնում է դասախոսի բոլոր գործողությունները և այդպիսով կարողանում է սովորել նոր ընթացակարգեր:



### ***Veyon- ի կարգավորումները***

Veyon ծրագիրը նախատեսում է հասանելիության մուտքի երկու եղանակ: Յիմնականում օգտագործվում է բաց և փակ բանալիների տարածման եղանակը, որով ղեկավարող համակարգիչը ունենում է նշաված երկու բանալիները, իսկ ղեկավարվողը միայն բաց բանալին:

Յամակարգչային լսարանի բոլոր համակարգիչները պետք է կարգաբերվեն միևնույն եղանակով, որպեսզի ծրագիրն անխափան աշխատի:


Ծրագիրն ունի երկու հատված՝

1. Ծրագրի ղեկավարման (Veyon Configurator)
2. Լսարանի ղեկավարման (Veyon Master)




## VEYON ՕԳՏՎՈՂԻ ՁԵՌՆԱՐԿ

Ծրագիրը գործարկվում է պիտակի վրա երկու




START MENU-ից կամ ծրագրի անգամ քիկ անելուց:

Ծրագրի ինտերֆեյսը ունի պարզ տեսք՝




Բացված առաջնային էջում հասանելի են լսարանի բոլոր համակարգիչները, իրենց պիտակներով, որոնցում արդեն երևում են միացված համակարգիչների էկրանները:




Մ.Ա.Յովհաննիսյան

Ծրագրի վերևի հատվածում տեղակայված է ողջ գործիքակազմը, այն հասանելի է նաև ցանկացած երևացող համակարգիչների պիտակների վրա աջ բլիկ կատարելով:




Ընտրացանկից սեղմելով (Полноэкранное Демо) կոճակի վրա, դասախոսը կարող է հեռարձակել իր էկրանը լսարանի մյուս մասնակիցներին, գործընթացը տեղի ունենում ավտոմատ կերպով, և լսարանի մյուս մասնակիցները կարող են հետևել դասախոսի էկրանին:



Մ.Ա.Յովհաննիսյան

(Заблакировать) –կարող է արգելափակել ցանկացած համակարգչի աշխատանք


(Удаленный просмотр)- դիտել ցանկացած ուսանողի համակարգչի էկրանը,  
(Удаленное управление) կոճակի միջոցով ղեկավարել ուսանողի համակարգիչը:



(Включить) կոճակի վրա մեկ քիկ կատարելով դասախոսը կմիացնի լսարանի բոլոր համակարգիչները հեռավար կերպով:

(Перезагрузить) կոճակի վրա մեկ քիկ կատարելով կվերագործարկվեն բոլոր համակարգիչները:

(Выключить) կոճակի միջոցով հեռավար կերպով կանջատվեն լսարանի բոլոր համակարգիչները:



(Текстовое сообщение) – այս կոճակի միջոցով հնարավոր է հաղորդագրություն ուղարկել լսարանի համակարգիչներին:

(Открыть веб-сайт)- հնարավորություն է տալիս մեկ քիկով լսարանի բոլոր համակարգիչների վրա գործարկել դասախոսի կողմից մուտագրված կայքը:

(Передача файлов)- հնարավորություն է տալիս դասախոսին ուղարկել ֆայլեր լսարանի մյուս մասնակիցներին: